



ծող, Սուլթանի հացին իւր քսողները մինչև օրս և ոչ մի թիւրք պաշտօնեայի վրայ ձեռք չբարձրացրին, այն ինչ 2—3 շաբաթէլայ ընթացքում 3 ազնիւ և անձնուէր յեզափոխականներ ըսպանեցին և երկուսին վերադարձրեցին :

Եւ օրպիսի ստորութիւն պանդուխտ ու հալածուած թշուառ հայ ժողովրդի ամենաչարքաշ աշխատանքով վաստակած կոպէկները հաւաքել թիւրք կառավարութեան դէմ կուսուր նպատակով և այդ դրամով յայտնի ոճրագործներ վարձել հայ յեզափոխականներին սպանելու համար . . . Դրանից էլ ստոր, ճիւղալային ու զազրելի բան մի՞թէ կարող է լինել, հայրենակիցներ :

Այդ նողկալի վարմունքը քաղաքակիրթ աշխարհի աչքում ըստորացնում է ո՛չ միայն բոլոր հայ յեզափոխականներին, այլ և ամբողջ հայ ազգութիւնը : Ամենաբարբարոս և վայրենի ցեղերի մէջ անգամ այդ կարգի ճիւղալային երեւոյթներ չեն կատարուում : Այլ ևս ի՞նչ երեսով հայ ժողովուրդը քաղաքակիրթ եւրոպայի կարեկցութիւնը պիտի հայցէ :

Եւ արդեօք այդ շարագործներին գլխաւոր նպատակն էլ հէնց այն չէ՞, որ իրենց գաղանային վարմունքով արատաւորեն ամբողջ հայ ազգը և այդպիսով երկրորդ անգամ վիժեցնել տան Հայաստանի ազատութեան գործը : Դրանից էլ աւելի ի՞նչ մեծ աջակցութիւն կարելի էր մատուցանել կարմիր Սուլթանին . . . :

Չգուչացէ՛ք, ամեն կերպ ըզգուչացէք այդ շարագործներին, հայրենակիցներ, և ամենուրեք հետամուտ եղէք, հսկեցէք դրանց, որպէսզի թոյլ չտաք այդ ճիւղալային իրենց գիւղային ծրագիրը կատար ածելու :

Միեւնոյն ժամանակ խղճացէք այդ թշուառ հրէշներին, ետքի մի՛ մտածե՛ք որանց յարսգործ ոճիւրներին նոյնպիսի ոճիւրներով պատասխանէ, որովհետեւ նախ որանցից շատեր չեն էլ հասկանում իրենց նոյնպիսի արարներին նշանակութիւնը, եւ երկրորդ՝ եղբայրասպանութեան նման առեղի հասնաւ անկում ու կործանում ետքից չէ կարող լինել մի ազգի հատար :

Ամենահախուռն պրօպականդայի միջոցով աշխատեցէք այդ շարագործներին միամիտ ու կոյր գործիք եղողներին հասկացնել այդ ստակալի դաւադրութեան կործանիչ նշանակութիւնը, որպէսզի թոյլ չտան, որ ազգային այդ ամենամեծ խայտառակ դրութիւնը երկար շարունակուի :

Չգուչացէ՛ք, հայրենակիցներ, բայց և սասնապատկեցէք ձեր յեզափոխական եռանդն ու կորովը որպէսզի հնարաւորութիւն ունենանք գիւղաբնակ թէ մեր բնական թշնամիներին—թիւրք և ուս կառավարութիւններին, — և թէ՛ դրանց—միանգամայն անբնական և մեր միտ ու արիւնից կաղմուած — օգնականներին :

Նշան Լամբրուանի  
Թ. . . քաղաք, 12 նոյ. 903 թ.  
Յ. Գ. — Խնդրում ենք « Երիտ. Հայաստան » ին արատապել :  
Նոյն

Հ Ն Չ Ա Կ Ե Ա Ն Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ե Ն Ի

Անցեալ անգամ նկարագրելով մեր երկու անմահ ընկերներին՝ Համբի և Որոտրի փառաւոր թաղման հանդէսը, խոստացել էինք սպազալում նրանց մանրամասն կենսագրութիւնը հարուգելով « Վերածնութեան » ընթացքը ցողներին. առ այժմ, սակայն, բաւականանում ենք միմիայն ամենահակիրճ հայեացք նետելով երկու նահատակների կեանքի մի քանի կէտերի վրայ :

Ո՛վքեր էին մեր պաշտելի ընկերները, որոնց մահուամբ ծանր և անփոխարինելի կորուստ ունեցաւ Հնչ. կուսակցութիւնը :

Բնիկ էր Վրաստանից էր Համբը, Արամ Մ. Գրիգորեան, 20—րդ տարին հազիւ թեւակոխած, որի ծնողները գաղթել էին Ռուսաստանի Սլ. քաղաքը : Բացի մայրենի լեզուից, քաջ գիտէր Ռուսերէն, Թուրքերէն և Դրանսերեն լեզուները : Աւարտել է Ռուսաստանի բարձրագոյն ճեմարաններից մէկը : Գեռ դպրոցական չէ՞մք յեզափոխական վսեմ գաղափարը ընդգրկած՝ Հնչակեան դրօշին տակ է մտել : Գործել է Կ—ի շրջանում իբրև եռանդուն, ազնիւ և վերին աստիճանի անձնանուէր Հնչակեան պրօպագանդիստ. և ուր որ եղել է՝ իւր քաղցր, գրաւիչ բնաւորութեամբ պաշտելի է եղել շրջապատողներին և ընկերներին . . . Կրթութիւնն աւարտելուց յետոյ ռուսցի է եղել հայ դպրոցներում, և բացի յեզափոխական վառ գաղափարները հայ ժողովրդի մէջ

ծաւալելուց՝ հետաքրքրել է հայ ժողովրդի առօրեայ ցաւերով ու վշտերով և մի հարուստ ժողովրդական հաւաքածու ունի, որ մրցանակաբաշխութեան է դրած :

Վերջին ժամանակներս փոխադրուել էր X—քաղաքը, ուր յայտնի ֆիրմաներից մէկում կառավարչի պաշտօն էր վարում : Երև. քեղէս տարի առաջ, շնորհիւ իւր եռանդուն գործունէութեան և անչափ համակրելի ու անկաշառ բնաւորութեան՝ ընկերներին միահամուռ ցանկութեամբ « Բանաւորակ » նախագահ ընտրուեց : Այս պաշտօնում նա ցոյց տուեց մեծ ընդունակութիւն իւր հիմնական յեզափոխական գաղափարներով, որոնց կէտ նպատակն էր համահայկական յեղ. ուժերով կուսի ընդդէմ իւր թանկագին հայրենիքի դարաւոր թշնամի թիւրք բռնակալութեան : Նրա օրով « Բանաւորակ » — ը առանձին փայլ և գիրք ստացաւ : Հնչակեան դրօշին զինւորագրուած՝ նա շարունակ, գիշեր և ցերեկ, լարւած և յարատեւ տքնութեամբ, շատ և շատ անգամ ձմեռուայ սասնամանիքին, գիշերուայ ահռելի ցրտերին՝ այս կողմ և այն կողմն է վազել, կաղմել, կազմաւերել է, խմբեր և համակողներ պատրաստել իւր հարազատ ժողովրդին և պաշտելի կուսակցութեան օգտակար լինելու համար : Այնքան սիրուած էր իւր ընկերներից, որ վերջին տեղական պատգամաւորական ընտրութեան ժամանակ միաձայն լիազօր պատգամաւոր ընտրեցին, վստահ լինելով որ իրենց հօգու և մտքե-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն 25

ԱՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՊԵՏՅԵՑԻ  
Քարգնանեց Քրանտերեն  
Ա. Տ—եան

ԱՆԻՇԻԱՆԱԿԱՆ ՏԱԲՏԻՔԱՆ ԵՒ  
ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Անհատներու և խումբերու մէջ համարաշխութեան զգացումը զարթնեցնելով մենք կաշխատինք եռանդով այն մեծ նպատակի համար, որ որուն պէտք է հասնինք, այն է՝ մարդկութեան յատկաբնութիւնը :

Անիշխանականներու անհատապաշտութիւնը, անձնական արժէքի մասին իրենց տածած մեծամտութիւնը կը թող որդի է ամէն տեսակ ընկերակցութեան, մինչդեռ սպազան ընկերակցութեան կը պատկանի : Եկատուած է որ այն անհատապաշտական քաղցկեղը գոյութիւն ունի նոյն իսկ մեր գործակցական ընկերութիւններու մէջ, որոնց նպատակն է իրենց անդամներուն մէջ սէրը զարգացնել : Ինչպէս որ շատ անգամ պատահած է, եթէ գործակցական ընկերութիւններու անդամներուն անձնական օգուտները կը գերակայեցնեն ընդհանուր բարեկեցութեան համար մղուած պայքարը, այն ատեն գործակցութիւնը — թշուառութիւնը մեղմացնելու այդ միջ-

ջոցը — պէտք չէ անպայման կերպով ընդունուի : Բարոյական տեսակէտէն նայելով, սէնտիքաները (բանաւորական ընկերութիւնները), որոնց ընդդիմադրական սնտուկը կը ահանչէ գոհողութեան ոգի յաղթելու համար ընդհանուր թշնամին, շատ աւելի նախամեծար են : Հոս երեւան կոչուան անձնութեան և ընկերակցութեան դէպքեր, զորս պատմութիւնը չարձանագրեր, բայց ատոնք յայտարար նշաններն են սպազան բանաւորական ընկերութեան :

Որքան բազմամարդ է այն խումբը, որուն մարդ սերտ կերպով միացած է, այնքան աւելի բարձր է այն բարոյական մակարդակը, որուն մարդ հասած է : Ընտանիքի սէրը, հայրենիքի սէրը յաճախ ետախրութեան ընդարձակումն է աւելի լայն շրջանակի մը մէջ : Բայց ան ինքզինք անդամ կը համարէ թշուառութեան ընկերակցիցներու մեծ ընտանիքին, որ երկրի վրայ կը բնակի և պիտէ, կարելիութեան սահմանին մէջ զոհուի՛ աւելցնելու համար անոնց բարեկեցութիւնը և կամ պակասեցնելու համար անոնց տառապանքը, անիկա աւելի բարձր է քան այն որ կը սիրէ իր ընտանիքը և իր հայրենիքը :

Անձնական շահը կը մնայ մեր կրքերուն էն գորատրը, թէեւ ուրիշները մեզ կատարեն և առջնորդեն մեր դրօշուկութիւնները, այն է՝ բարեկեցութիւնը, գթութիւնը, սէրը և սակաւութիւնը, սնտուառ-

թիւնը և հպարտութիւնը, սրտնեղութիւնը և հեշտասիրութիւնը : Պէտք է սակայն մտածենք թէ մեր կատարած ո՛րեք գործը չպիտի վնասէ մեր ընկերով, վիշտերու ու տառապանքի պատճառ չպիտի ըլլայ :

Ուրեմն համարաշխութիւնը պէտք է ըլլայ մեր դրօշուկութիւններուն շարժառիթը և հոտ կրնանք թողուլ ազօտ նշանակութիւն ունեցող եղբայրասիրտքի բառը : Փոխադարձ համակրութիւնը աւելի զօրեղ պիտի ըլլայ, երբ մարդիկ գտնուին կողք կողքի կուտի և կեանքի պայքարին մէջ, իրարու թեւ ու թիկունք ըլլան և իրարու հանդէպ կատարեն բարեկամական պարտականութիւններ : Արդէն մեր անհատապաշտական ընկերութեան մէջ իսկ, որքանոցները, հիւանդանոցները, մարքայախանութեան հաստատութիւնները կապացուցանեն որ գթասրտութիւնը և աշխատիքութիւնը դեռ կապին մարդկանց սրտին մէջ :

Ի՞նչ մեծ ծաւալ պիտի ստանան այս զգացումները այնպիսի ընկերութեան մը մէջ, ուր օրական հացի կը ռիւր չպիտի դառնացնէ սրտերը : Իրաւունքներու և պարտականութիւններու կատարելի հաւասարութիւնը պիտի զարգացնեն անձնատրուութեան, ինչպէս նաեւ ուրիշին ունեցած արժանիքին և իրաւունքներուն զգացումը : Գեռ երկար ատեն պարտականութեան զգացումը ընդհարման մէջ պիտի գտնուի բացարձակ ազատութեան վերացական զաղափարին հետ, և դեռ երկար ժամանակ սաղմոսնե-

րու և կեանքի պայմաններու տարբերութիւնը պիտի լիբաւորէ բացարձակ հաւասարութեան գաղափարը : Բայց այդ երկուքն ալ ընդունակ են յատկաբնութիւն և բարեփոխուելու :

Որքան որ անհատին բարոյականը և զարգացումը բարձր ըլլան, այնքան աւելի մեծ պիտի ըլլայ ազատութիւնը, զոր պիտի կրնայ վաշխելը : Որքան որ արդիւնաբերութիւնը ճոխ ըլլայ, այնքան աւելի բազմաթիւ պիտի ըլլան վաշխեցները, զորս պիտի կրնայ ձեռք բերել, քանի որ մենք կը պահանջենք ազատութիւնը և հաւասարութիւնը ամենուրեք համար և ոչ թէ քանի մը հողի համար, ուրեմն անհրաժեշտ է գծել ազատութեան սահմաններ, որոնք պիտի ջնջուին սակաւատ ասակաւ : Այն, որուն հիմնական կրնանք հասնիլ, արդէն մեծ քայլ մը պիտի ըլլայ դէպի առաջ : Ապագային համար խօսքը պէտք է տանք դէպքերուն, անհատներու նկարագրի կազմութեան մասին : Կարելի չէ խաղող քաղել սակաւի (փուշ) վրայ սնտուառութեան և անհաւասարութեան մէջ կրթուած մարդոցմէ անկարելի է պահանջել ազատութեան ճշմարիտ ըմբռնում և սէր դէպի արքայութիւնը : Չմոռնանք որ հաւասարութիւնը ազատութեան ծաւալման անհրաժեշտ պայմանն է :

(Շարունակելի)

րի իսկական թարգմանը և արտասույթը կը լինի: Պատգամաւոր էր ընտրած նոս նոր՝ Ծագում և երեք այլ Մասնաձեւերի կողմից:

Փառաւոր և ապահով պաշտօնից հրաժարելով՝ գաղափարով տողորուած Լօնդօն շտապեց՝ Հնչակեան Կուսակ. IV-րդ ընդ. Պատգ. ժողովին մասնակցելու համար: Այստեղ ևս նա իւր փառաւոր գերը կատարեց իբրև պատգամաւոր: Հապա իբրև ընկեր, իբրև անձ, կարճատե փամանակայ ընթացքում գրաւեց վառ զգացմունքներով և անշէջ սիրով իւրն ընկերներին, բարեկամներին և սրտակիցներին...:

Եւ երբ պատրաստուած էր հայրենիք վերադառնալ՝ միանգամ ևս ուժեղ թափով նետուելու հայկական ներկայ տաղնապարհից կեանքի մէջ, որոտաց թեւաբերուած ոճրագործի մահառիթ գլնդակը և յափշտակեց մեզնից մեր պաշտելի Արամի թանկագին կեանքը...: Ճիշտ այն ժամանակ երբ Սուլթան Համիդի բռնակալութեան տակ հեծեծող ժողովրդի ցաւերին գարման անելու միջոցներ էր խորհում մի եղբայրը և հայ ոճրագործի գեղակից գեաին գլորում, մարտիրոսանում, նոյն ժամանակ Արամի միւս եղբայրը՝ նախատակում է Մեծ-Աւազակապետի արիւնքուշտ կողակները հարածները քակ Բագու քաղաքում...: Դրամատիքական և սրտամարմնք զուգադիպութիւն...:

Որսորդը, Տիգրան Իզմիրեան, Գերսիմի հերոսը, երզնկացի էր, հաշիւ 30—32 տարեկան: Սկզբնական կրթութիւնն առել է Զմիւռնիայի Ազգային վարժարանում: Դեռ դպրոցա-

կան նստարանի վրայ՝ առանձին սէր և հալում էր ցոյց տալիս դէպի մեքենայագիտութիւնը և, մանաւանդ, զինագործութիւնը, որ առանձնապէս ուսումի յայտնի գործարանում՝ գործնականօրէն: Յայտնի էր իբրև սքանչելի և տաղանդաւոր զինագործ, իւր ձեռագործ զէնքերով աճ ու սարսափ տարածելով Հայ ժողովրդի արիւնհարու թշնամիները վրայ:

Քսան տարեկան հասակում արդէն՝ ոգևորուած յեղափոխական գաղափարներով, մտել էր Հնչակեան կուսակցի շարքը...: Վերջերս էլ Երզնկայի մէջ Մեծ Մարդասպանի փետայ Զէքի փաշայի հրամանով կախաղան բարձրացած յայտնի հրոսակապետ Քեռի ընկերը և ալ բազուկն է եղել նրա կուսակցի մէջ մեծ գերխաղացի և հերոսական սիրազործութիւններ արել, Երկու երեք տարի շարունակ Դերսիմի լեռնաշղթաներում ապաւինած՝ Օսմանեան Չորրորդ զօրաբանակին—հռչակաւոր Զէքի փաշային մեծամեծ նեղութիւններ ու ծանր հարածներ է տուել: Ամբողջ գլխերներ անքուն և մեծ մասամբ ձիւնի մէջ յանուն իւր գաւառած զաղափարների՝ անվատ կուր է մղել իբրև առիւծափրոս և անվերջ հերոս, մարտնչող, իւր հարազատ ժողովրդի թշնամու գէմ...: Մի քանի անգամ գաւառաւորութեամբ գերի է բռնուել և բանտարկուել, ստակալի և անպատմելի տանջանքների ենթարկուել Տաճկական զինաներում, սակայն, վերջիվերջոյ, ճարպիկութեամբ փախել է թշնամու շրջութաներից...:

Հայկական զարթոնքի կոտորածներից յետոյ՝ կտրիճ և անվերջ, բայց վերին աստիճանի

համեստ, իւր հերոսութիւններով մասին բառ անգամ չարտասանող Որսորդը, այլևս անկարող լինելով պատասպարուել, անցել է Ռուսաստան: Սակայն, ապտեղ ևս անգաղար աշխատանքով է իւր հայրենակիցների մէջ վառ պահպանել յեղափոխական և կուր գաղափարը, այն յուսով, որ մի օր, վերջիվերջոյ, կերթայ իր սիրելի հայրենիքը և, իբրև անվերջ գինուր, կը մարտնչի թշնամիների գնդերի գէմ, սակայն ընկերների ցանկութեամբ պատգամաւոր ընտրեց նաև հանգստի և Ծխախոտի Մասնաձեւերի կողմից և աճապարեց Լօնդօն՝ Հնչ. Կուս. IV-րդ Պատգամաւորական ժողովին մասնակցելու համար: Սակայն, աւաղ, այն կտրիճը, որ մի հարածով մի քանի լիրբ տաճիկները գլորել գեաին, որ միայնակ իւր կեանքը խլող տասնեակ ոճրագործների գէմ կը կուէր բացարձակ կուում, — գաւաղութեամբ, տմարդի դաւաճանութեամբ գետին գլորուեց՝ մի ակնթարթ անգամ չգիտակցելով, թէ որտե՞ղից, ինչ՞պէս և ումից արձակեց մահառիթ գնդակը:

Մի գերեզմանում յաւիտենականապէս պառկեցան երկու նահատակները...: Մի գերեզմանի մէջ՝ երկու գաղաղներ, անբաժան ընկերների սուրբ մարմինները կը գրկեն միմիայն՝ յաւիտենական և քաղցր յիշատակ թողնելով իրենց բազմաթիւ ընկերների, բարեկամների սըրտակիցների և հայ ժողովրդի հոգւոյ մէջ, որի համար մարտիրոսացան նրանք...: Կանցնեն օրեր և տարիներ, և ամեն անգամ՝ Լօնդօն իշնելուն պէս, ձեր ընկերները, պաշտելի նահատակ-

ներ, խոռոված հոգւով և արտասուած թոր՝ կը մրմնջան այն սըրտառուչ քառատողերը, որ արտասուել էր անգլիական ժողովուրդը՝ սգատումների վրայ գրող՝ մուած՝ ձեր հանձնուաց յիշատակին...:

«Վշտով ենք նայում փակած աչքերին, որոնց սիրեցինք այնքան անցեալում, Մահաւոր էլ քաղցր է նրանց երգը վերջին, Դարձեալ կը տեսնենք մօտ ապագայում»:

Մեզնից գնացիք, բայց չէք մոռացուած:

Ձեր յիշատակը չի անհետանար, Գաղցրագիւղ խմբեր կը պըտտեն միշտ՝ Ձեր գերեզմանի շուրջը անգաղար...:

Այո՛, ձեր քաղցր յիշատակը չի անհետանալ, պաշտելի նահատակ ընկերներ:

Լօնդօն Ընկիր

ՍՕՅԻԱԼԻՉՄԻ ԵՒ ՀԱՅ ՏԵՂԱՓՈԻՒՆԸ

Չկայ աւելի ապերախ գործ, քան այն աշխատանքն որ պէտք է գործ դնել ապացուցանելու համար սնտիրութիւնը այն ստոր զրպարտութիւններուն և փողոցային հայտնաբերութեան, որոնք կ'ուղղուին սօցիալիստներու հասցէին այնպիսի «հրապարակագիրներու» կողմէ, որոնք թէ ինքզինքնին և թէ իրենց ընթերցողները յարգելու չափ խղճմտիւ չեն: Այսպիսիներուն կարգէն է «համբաւար» «Շարժում»ի աւելի ևս «համբաւար» վարդօն: Կերտի թէ «Շարժում» ստեղծուած է հայ «ազգ» մտորեցնելու և կամ սօցիալիստները «սեւացրելու» միակ նպատակով: Այս թերթը անազնուութեան ու շարքաթանութեան մասին, կը գերազանցէ նոյն իսկ պուլիտախան «Վէճերնա Բօշխան», որ հասարակ պուլիտիկայի լրագիր մըն է:

Նոյնիսկ հոս մենք ապացուցինք վարդօնի մտաւոր սնանկութիւնը:

ԱԻՏԻՍ ՆԱԶԱՐԲԷԿ 7  
ԶԱՐԱԽՕՍ ԹՁՈՒԿԸ  
(Հ.ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՒ Cie ՀԱՍՏԷԻՆ)

Անտուութիւն կը լինէր, ի հարկէ, Առաքելեանի պէս մի կրէտիցից սպասել ամենատարական հասկացողութեան նշոյլ անգամ այգիների մի վսեմ և միանգամայն պարզ սկզբունքի մասին, որ ընտելեամբ ազնիւ մարդն արդէն զգում է քնազգօրէն և որ Եւրօպայում հասարակական ու դատական օրէնքի կարգ է անցած: Նա իրա համար ձեռնուած է համարել իր բարոյական նկարագրի համապատասխան մի շէզեխական սօփիստութեան տակ քուարկելու և այդ սօփիստութիւնը ներկայացնելու մեզ իբրև ինչ-որ «սկզբունք»: Այդ «սկզբունք»ին նայելով՝ «անյայտ, անծանօթ մարդ» մասնաւոր ու հոգեկան կեանքը հրապարակի վրայ գնելու «հարկատուութիւն» չը կայ, իսկ մեր թղտկն այդ «հարկատուութիւնը» զգացել է «հասարակական և ազգային գործիչ» (այսինքն՝ մեր) նկատմամբ, որի կեանքը նա իր իրաւունքն է համարում թաւալել նոյն իրա խնդրից թափած տիղմում: Այստեղ սակեք փակագիրի մէջ, որ եթէ հայկա զգաւորութիւն ունենայինք

մէկ Առաքելեան տեսնել մեր գլխին իբրև գործիչ, նրա մասնաւոր կեանքում, հէնց նոյն իր «սկզբունքի» գորտութեամբ, քար քարի վրայ չէր մնալ: Բայց Առաքելեանը գիտէ, որ իրան գործիչի տեղ գնող էլ չը կայ և ուրիմ «անյայտ մարդ» քաջութեամբ կարող է «սկզբունքներ» հնարել հասարակական գործիչի գէմ: Յիշախ ձիւն ու ջեղ-իտական սօփիստութիւն, որով նա քօղարկում է իր յարցալուծանքի անխտտ լանելի նպատակը մեր գէմ: Ի՛նչպէս, ուրիմ, մէկ «անյայտ, անծանօթ մարդ» իր ներքին կեանքով արժանի է յարգանքի և անբռնաբարութեան, իսկ մի «հասարակական և ազգային գործիչ»՝ ո՛չ, Ուրիմ, մէկ «անյայտ ու անծանօթ մարդ», որ ապրում է մի միայն իր անձի համար, իր ներքին կեանքով հանրիտանում է աշատ և անբռնաբարելի անհատ, իսկ «հասարակական ազգային գործիչը»՝ ո՛չ, մինչդեռ այս վերջինս իր բնական ձիրքերի համեմատ ծառայութիւն է մատուցանում ազգին: Առաջին անհատ անծանօթ և անօգուտ է հասարակութեան, ուրիմ յարգենք նրա ներքին կեանքը, իսկ երկրորդը հանդիսացած է օգտակար իր ազգին, ուրիմ... ոտնակոխ անհնք նրա ներքին կեանքը — ահա Առաքելեանի անհեթեթ և ամեն ազա-

տութեան հակառակ «սկզբունքը»: Նա չէ էլ իմացել, որ աշխարհիս մէջ ամենատարական մի սկզբունք է դարձած, որ պէտք է ամենից շատ յարգել այն անձերին, որոնք օգտակար են հանդիսացել հասարակութեան, և որ սկսած Գեօրգիւնից, Հիւգօներից, Բայրոններից մինչև աւելի համեստները, բոլոր գործիչները որքան էլ ունենան նրանք, կենսաբան, բացասական յակոբիաններ, միշտ արժանի են մարդկութեան երախտագիտութեան, որովհետեւ նրանք եղել են առաւել կաւ պակաս օգտակար մարդկային հասարակութեանը: Դիտեցէք նոյն իսկ մեր փոքրիկ ազգի հասարակական, այժմ ո՛չ կենդանի, գործիչների շարքը: Մենք նրանց յարգում ենք իրանց օգտակարութեան համար՝ առանց քրքրելու, թէ նրանք ունեցել են կամ ո՛չ իրանց ներքին կեանքում այս կամ այն բացասական յակոբիանը կամ քայլը, և մենք նրանց յարգում ենք այն օգտի ու ծառայութեան շարժով, որ նրանք մատուցել են հասարակութեանը:

Առաքելեանը նախազգացել է, որ իր շէզեխական սօփիստութիւնը կարող է այգիների ջախջախիչ պատասխաններ առաջացնել. նա կուսնէ է, որ իր «սկզբունքի» սակ թաքնուելը դժուար կը լինի և նկեց այդ պատ-

ճառով է, որ ոսկակոխ և արեւ ճշնարտութեան և երեւան եկել մեր վերջիչած ազգային դրանական ակրաստուրեան նորոգ կրկնութեանը: Նա դրանով ձեւացնում է, թէ իբր քանում է «հասարակական և ազգային գործիչին», մինչդեռ իր թաքնու նպատակըն է եղել այդ ձեւի պատրաստի ներս սպառել մեր ներքին կեանքը և վատարար զրպարտելով մեզ: Եւ հասարակութիւնն աւելի գրգռուել համար մեր գէմ նա իր աջեմական բանբասանքները, զրպարտութիւնները ներկայացնում է այնպիսի մի ոճով ու լեզուով, ուր լի են հայտնաբերի յիշողներ, ձիշտ գիտնանից դուրս և կամ մի հարթած շուկայական կիկեօթի նման: Եւ այգիների լեզու ու նկարագրի տէր մարդը դեռ յանդգնում է ազնուութիւն, շխտակութիւն, սկզբունք և նոյնանման խօսքեր իր բնութան առեւել... Այո՛, այո՛, ամօթ ենք զգում մեր հասարակութեան պատէի համար, որը միթէ՛, յիբարի, այնքան ընկած է, որ մէկ ինչ-որ Առաքելեան երես է աւսում լրբարար նրա առաջ գուրս գալ իր բախտախնդրական մտքի զգեկել արտագրութիւններով:

(Շարունակելի)

հիմայ մեզ կը մնայ երեսան բերել ա- սոր օրկան «Շարժում»ի քարոզական սնանկութիւնը :

Վերջերս մենք խորհուրդ կուսա- յինք մեր ընդդիմախօսին կարգալ սօ- ցիալիստական գրքոյկներ, որոնք սոյն իր նշանաւոր «քննադատութիւննե- րուն» մէջ նորանոր յիմարաբանու- թիւններ հրատարակելէ զերծ մնայ, իսկ այժմ մենք զինք պիտի զրկենք մեր այն յօդուածներուն, որոնք հրատա- րակուած են նոյն իսկ իր թերթին մէջ, ըմբռնելու համար թէ ինչ է սօցիա- լիստներուն յարաբերութիւնը գէպի հայ յեղափոխութիւնը եւ ատոր ար- նայալիստները, քանի որ ան կըսէ թէ մենք, սօցիալիստներս, «ծաղ- րում ենք հայկական ապստամբու- թիւնը» :

Ահա թէ ի՞նչ կը բարբառնէ Վար- ղօ իր փալախին մէջ մեր հասցէին :

Սրանք (հայ սօցիալիստներ — Ա. Յ.) ծաղրում են հայկական ապստամ- բութիւնը, հայի անցեալը, ներկան եւ ապագան :

Իբր պատասխան մեր հակաա- կորդին խեղաթիւրումներուն, մենք պիտի քաղենք քանի մը ընտրել մա- սերը մեր այն յօդուածէն, որ զետեղ- ւած է իբրեւ յտաճարան «Ազատու- թեան ճանապարհին» գրքոյկի պուլ- կարեքէն թարգմանութեան մէջ : Այդ յօդուածը հայերէնի թարգմանուելով հրատարակուած է «Շարժում»ի 511 եւ 512 թիւերուն մէջ «Ղարբ» Պուլկար ընթերցողին աւջեւ : Խորագրով :

Ահա թէ մենք ինչ կըսէինք . . .

չօչախելով այն ցնցումները (որոնք կը գրուեն 1891—1901-ի յիշատակի շքանք), կըսեմ, որոնք ապացուցին քաղաքացիական անարար աշխարհին թէ հայ ազգը—ասիական այս պօէր- ները — չպիտի հանդարտի մինչեւ որ չնսնանայ թող ծով արիւնով ըլլայ, թէ՛ ազատութիւնը, որ կ'ապրի թիւն կ'ապրի սոյն անոր սրբնից քաղաքի ան- սնական ու կուլտուրական զարգաց- ման գահավէժ ուղիին վրայ վերջնաւ կ'անապատու համար գերու- թեան էն յետին ձեռքն անտեսական, . . . թէ հոն — արեւի ծննդավայրին մէջ—կապրի կենդանի, հոգի ու կա- բող ազգ մը . . . »

Մեր մէկ ուրիշ յօդուածին մէջ բառացի կերպով հետեւեալը կըսէինք «բոլոր այս ըսուածէն (էվոլուցիայի մասին խօսելու ատեն, — Ա. Յ.) ըն- թերցողը թերեւս հետեւցնէ թէ գո- յութիւնը չունին ուրեմն յեղափոխու- թիւնները, որոնք եղած են, կ'ըլլան եւ պիտի ըլլան ինչպէս բնութեան, նայալէս հասարակութիւններում մէջ : Մենք համոզուած ենք թէ յեղաշրջում ու յեղափոխութիւն երկու տարբեր բովանդակ են միեւնոյն ածման (բօ- ցես) . . . »

Ուրիշ տեղ գրած ենք : «Եթէ եր- կրի մը ու եթոխայի մը ժողովուրդը, որ այնպիսի վճռողական (ինչպիսի բողոք) որ կապրի հիմաւայաստան, այ- սինքն յեղափոխական. — Ա. Յ.) բո- պիտի մը մէջ կապրի, կը գտնուի յա- տուկ պայմաններու մէջ, այս բովանդակն

\*) Տես «Շարժում» թիւ 547  
\*\*) տես «Շարժում» N-0 512  
\*\*\*) Տես «Շարժում» N-0 512  
Մենք կը խօսինք դասակարգային հասարակութեան մէջ տեղի ունեցող յեղափոխութիւններու մասին, որով- հետեւ, ինչպէս յայտնի է, «միայն իրերու այնպիսի կացութեան մէջ, երբ որ ալ գոյութիւնը չպիտի ունե- նան դասակարգ ու դասակարգային անդակոնիզմ, սօցիալական երկուցիւ- նեղ պիտի գարբին փայտակալան ղեկո- յիցիաներ ըլլայէն» :

Վերադարձը յեղա փոխութիւնը չէ կարելի ըլլալ, այլ սպասակալական կերպով, եւ ասիական պիտի տեսէ մինչեւ որ վերած- նամ յեղափոխական հասարակական դասակարգը գրաւէ քաղաքական իշխա- նութիւնը տիրապետող դասակարգին ձեռքէն, եւ իրագործէ իր սեփական պահանջները, շահերը ու ձգտում- ները : Այս միտքը հաստատուելու հա- մար բառական է ակնարկ մը նետել մարդկութեան մօտաւոր անցեալին ու ներկային վրայ : Մտաբերինք 1789— 1871 տարիները ֆրանսայի մէջ, 1848՝ Բրուսիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ, Սլոնիոյ մէջ, 1866 Իտալիոյ մէջ, 1876՝ Պուլկարի մէջ եւ այլն :

Այսպիսի երեւելի ու նշանակելի տարիներ են Հայաստանի համար 1896—1897 տարիները : Հայ ազգն ալ անա- ապստամբ վճռողական բովանդակն ցընէ . . . » 1)

Այս քաղաքականութիւնը յստակ ու պարզորոշ կերպով կը տեսնուի որ հայ սօցիալիստները Ձե՛ն «ծաղրում հայ- կական ապստամբութիւնը, հայի անց- եալը եւ ապագան», այլ «ծաղրում են» այն ապստամբութիւնը որ կը կատարուի, զանազան անբարեխիղճ- Վարդօններու գլխուն մէջ :

Եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն Վարդօն այսպիսի յիմարութիւններ կը վերադրէ հայ սօցիալիստներուն, Շատ բացայայտ է, ան կուզէ զանոնք ներկայացնել, չայնպիս ինչպիսիս քնն իրա- կանութեան մէջ, Այսպիսի թարգմանու- յի ընդունակ են միայն հրատարակող- ական գիտակ կրող հասարակական լա- բախողացներ :

Գիշ վերը ընթերցողը կը տեսնայ թէ մենք «չենք ծաղրում հայի ոչ զէնքը, ոչ ալ գրամը», բայց այդ չարգելիք Վարդօն մեր հասցէին ուղ- դելու հետեւեալ անարար տողերը : «Այդ թուրքութիւնը ծաղրում են հայի զէնքը, որովհետեւ իրենք չեն կարող բռնել այդ վտանգաւոր գործի- քը, որովհետեւ չեն կարող մասնակ- ցել այն պայքարին, ուր կ'անդամ- ապաստի, ինչքի գործողութիւնը ան- հրատարակ է . . . » 2)

Որպէսզի ընթերցողին մտքին մէջ կասկածի նշույլ անգամ չմնայ, մենք քաղուած մըն ալ պիտի ընենք տարի մը առաջ գրուած մեր մէկ յօդ- ւածէն. (հրատարակուած «Շարժում»ի N-0 494-ին մէջ) որ պատասխան մըն է Վարդօնի զանազան քննարկումն : «Այս, մենք անդրադուրի կերպով համոզուած ենք թէ մարդկային պատմութեան մէջ կան բովանդակներ, երբ որ հրով ու արեւ- նով պէտք է պաշտպանել ժողովրդի շահերը, բայց լաւ ըմբռնուած շահե- րը : Ձեռք, օրինակի համար, այնպի- սի յեղափոխութեան կուսակիցները, որ քանի մը ամիսներ առաջ (1902-ի աշնան — Ա. Յ.) արուեստական կեր- պով Մակեդոնիայի մէջ հնարեցին քա- նի մը վարձկանները» : 3)

Ֆիւլիպէ Ա. Յակոբեան

- 1) Տես «ПО ПЯТЯ НА СВОБОДАТА», մեր ձանօթութիւնները էր. 82—83 :
- 2) «Շարժում» N-0 547
- 3) Տարակոյս չկայ թէ մեր խօսքը այն «յեղափոխութիւններու» մասին է, որոնք կը սարքուին Մակեդոնիոյ մէջ արքունական գործակալներու մի- ջոցաւ, ոչ թէ մակեդոնական գերին ազատելու համար, այլ անոր սուրբ գործը շահագործելու յօդուած իրենց «ամենասիրելի տերը» իշխան Ֆէր- սինանտի միապետական ձգտումնե- րուն : Ընթերցողին կը յիշեցնենք 1895-ի «յեղափոխութիւնը» նոյնպէս Ռատուլավովի չէրքէզական ղեկավար ժամանակ պայտած «յեղափոխու- թիւնը» : Ա. Յ.

Հնչուեալ թիւ ԳՍԵՆԱԿՅԱԿՈՆ «ԲՍԲՍՍՈՒՄ»

Վերջին տխուր անցքերը շա- հապարակ ելած են Գաշնակցու- թեան յայտնի եւ անյայտ փաս- տարանները : Մենք չկրցանք մինչեւ ցարդ հասկնալ թէ ար- գե՞օք կարծէր այնքան զբաղել, որքայքայուածաւ եւ ունեւածաւ կու- սակցութիւնով մը : Բայց այն իրողութիւնը որ Հնչակեան կու- սակցութիւնը իր ամեն կարգի հակառակորդներուն թունալից հարուածներուն շարունակ ենթա- կայ է, կուգայ ապացուցանելու որ ան աւելի քան կ'նստուցակ է :

Մենք խորհուրդ պիտի տա- յինք Գաշնակցական օրկաններ մտտող ոչհասարակական անձա- րակներուն «որ փոխանակ պղտոր շուրի մէջ ձուկ որտալ փորձելու եւ Հնչակեան հակասութիւններ գտնալով զբաղելու, աշխատեն իրենց ոչհակայս կազմակերպու- թեան համար մշակել գործունէ- ութեան նպատակայարմար ծրա- գիր մը՝ համապատասխան հայ կեանքի մէջ երեւան եկած նոր պահանջներուն :

Այդ գործը նոյնիսկ իրենց կուսակցութեան շահերուն տեսա- կէտով, անհրաժեշտութիւն մըն է :

Գաշնակցութիւնը միակ ոչօ- րեղաւ եւ ոչործօնա կուսակցու- թիւն ըլլալով ապացուցանելու հա- մար, այդ պարտններ չեն վարա- նիր գիմելու այնպիսի երախա- յական շարժապահցութիւններու, որոնք հասարակութեան լրջամիտ մասին արդահատանքը միայն կը շարժէ :

Մենք չենք զարմանար սա- կայն երբ կը տեսնենք որ համա- կիրներ ու կուսակիցներ շահելու համար, Գաշնակցականները ի- րենց կատարած ամենապարզ եւ ամենամեղման յեղափոխական գործը իրենց կուսակցութեան պէս ոչհակայս ցոյց տալ կը շա- նան, տակնուվրայ ընելով Հին եւ նոր աշխարհը : Այս ուղղութեամբ անոնք այնքան առաջ գացած են որ Գաշնակցական շարքերուն մէջ ոպեւորութիւնը պահելու համար, հեռուոր վայրերու մէջ իրենց երեւակայական քաջադործութիւն- ները կ'սկսին դուրստել եւ ներ- բողներ կը կարգան անպոյ Գաշ- նակցական Ա. քիլիէսներուն : Միւս կողմէ Գրոշակեան օրկանները ծայրայեղ փութիտութեամբ կը հիւրնկալեն Հնչակեան կուսակ- ցութիւնը եւ գործիչները անուա- նարկելու բնոյթը ունեցող եւ Ալքարիստներու հիանդոտ երեւ- կայութեան ծնունդը պղտելի ա- ռատակները : Հնչակեան կուսակ- ցութեան վտարուած զանազան թափփուր Սուի Գուգարները եւ ոչհակայս խմբագիր ??? Հրաշի- այներ, — որոնք գրկաբաց կըն- դունուի ոչհակայս Հայ Յեղ. Գաշ-

նակցութեանն ոչ նուազ շահա- գործման նիւթ կը մատակարա- բեն Գրոշակեան ոչհասարակա- գիրներու :

Յեղափոխական գիտակ կրող այդ պարտնները պէտք է լաւ ըմ- բռնեն որ եթէ փրփոխականութիւն կուսակիցներ վաստակելու աւելի դա- տապարտելի եւ ամբարոյականաց- նող եղանակը մէկդի չձգուի, Հի- սաստակութիւնը մեծ պիտի ըլլայ Գաշնակցական շարքերու մէջ եւ Գաշնակցութիւնը իբր ոչհակայ- կաշմակերպութիւն պիտի շարու- նակէ գոյութիւն ունենալ իրենց երեւակայութեան մէջ միայն :

Արտասահմանի մէջ Հնչակ- եան ոչքայքայումի վրայ ճառուղ- ները քիչ մը իրենց շուրջը նա- յելով պիտի տեսնեն որ իսկական քայքայումը գոյութիւն ունի Գաշ- նակցութեան մէջ կովկաս :

Գաշնակցութեան պատակտու- մը անխուսափելի հետեւանքն էր այդ կուսակցութեան անորոշ գիր- քին կովկասեան յեղափոխական շարժումներուն հանդէպ : կովկա- սէն հասած տեղեկութիւններէ կը տեսնուի որ Գաշնակցութեան մէջ գտնուող սօցիալիստական տար- րերը արդէն հեռացած են, իսկ ուրիշ մաս մըն ալ չէզոք տար- րերու հետ ձուլուելով կաշմած են ոչինքնապաշտպանութեան կ'օրի- տէները :

Գաշնակցութիւնը թերեւ խուսափէր այս քայքայումէն եւ թէ իր վարիչները Հնչակեանու- թեան մահացումով հետաքրքր- ւելէ աւելի, զբաղէին տալու ի- րենց կազմակերպութեան այն ուղղութիւնը որ համապատասխա- նէ իրերու նոր կացութեան : Եթէ ոչ արտասահմանի մէջ, գէթ կով- կաս կարգ մը Գաշնակցականներ տեսնելով իրենց առջեւ գերանա- ցած եւ անմիջական լուծում պա- հանող կովկասեան յեղափոխա- կան գործունէութեան խնդիրը, համոզուած են որ իրենց ներկայ բացասական գիրքը չիրենք պի- տի առաջնորդէ վերջնական քայ- քայման :

Հիմայ ընթերցողը պարզ կը տեսնէ որ քայքայումն որդը մը- տած է ոչ թէ Հնչակեանութեան, այլ այն կազմակերպութեան մէջ, որուն ներկայացուցիչները ինք- նագովութեան արտող կուրացած, անկարող են հասկնալու որ հա- սարակական կեանքը — շարու- նակ կարողութիւնը նորանոր երե- սյութներ, եւ այն կուսակցութիւնը որ անընդունակ է ըմբռնելու այդ երեւոյթներու իմաստը, դատա- պարտուած է չքանալու եւ անհե- տանալու հասարակական ասպա- րէզէն :